Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 2-ի N813 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 25-ի N444-Ա – N447-Ա, 2022 թվականի օգոստոսի 29-ի N448-Ա, 2022 թվականի օգոստոսի 29-ի N449-Ա- N450-Ա, 2022 թվականի օգոստոսի 30-ի N451-Ա - N456-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N445-Ա որոշումով տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթի պահանջին:

2. N454-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին:

3. N455-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում վաճառվող հողամասի մակերեսը տարբեր է գրառված:

4. N456-Ա որոշման վերնագրում «որոշման» բառից հետո անհրաժեշտ է գրառել միայն հետևյալ բառերը՝ «մեջ փոփոխություն կատարելու մասին», բացի այդ որոշման դրույթում «20-րդ» թվից և տառերից հետո անրհաժեշտ է գրառել «կետ» բառը: Որոշման դրույթում տեղամասային ընտրական կենտրոնի հասցեն թերի է գրառված:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
5 հոկտեմբերի 2022թ.